

անձինք ես, օգտուելով Զատկական տօներից, այցելեցին  
Մայր Աթոռու

Ուրախալի է այն կենդանի հետաքրքրութիւնը, որ  
այցելուները, հայ և օտարազգի, ցոյց են տալիս գէպի  
Մայր Աթոռու և նրա զանազան հաստատութիւնները:

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՁԿԱՍՏԱՆՈՒՄ

Բոլգարիայի Թագաւորը Կ. Պոլսում Պատրիարքի հրաժարականի  
խնդիր: Միջնադէպ միախնդիր պատճառով: Քաղաքական ժաղովի որոշում-  
ներ: Երիտասարդ եպիսկոպոսացուների խնդիր: Երուսաղէմայ գործեր:

Բոլգարական թագաւորի Կ. Պոլսում եղած ժամանակ  
մեր սրբ. պատրիարքը կամեցաւ ներկայանալ նորին Մեծու-  
թեան և չնորհակալութեան ուղերձ մատուցանել այն մար-  
դասիրութեան համար, որ նորին Մեծութեան կառավա-  
րութիւնը ցոյց էր տուել Արդիւլ Համիդի հալածանքի օրե-  
րին Բոլգարիա ապաստանող հայերին: Այս տեսակցութիւ-  
նը չէ յաջողուել, որովհետեւ ժամադրութիւն խնդրելու դի-  
մումն, որպէս թէ ուշացած է եղել: Բայց Կ. պօլսոյ լրա-  
գիրները պատճառը համարում են այն, որ բոլգարների  
թագաւորը չըկամենալով յունաց պատրիարքի հետ տե-  
սակցել, հրաժարուել է միւս ազգերի կրօնապետների հետ  
տեսակցութիւնից էլ:

Մեր սրբ. պատրիարքը անձամբ մատուցանելիք ու-  
ղերձը ուղարկել է բոլգար գեսպանի միջոցով և նոյն մի-  
ջոցով էլ ստացել է թագաւորի չնորհակալութիւնը:

Կ. Պոլսոյ լրագիրները հաղորդում են, որ մեր սրբա-  
զան պատրիարքը տկար է. և դարձեալ հրաժարականի  
խնդիրը նետուած է հրաժարակ:

Բիւղանդիոնը ասում է, եթէ պատրիարքը հրաժարուի

և ազգային վարչութիւնը մնայ, դարձեալ կսկսի այն ան-  
կերպարան վիճակը, ինչ որ էր առաջ, երբ պատրիարքը մե-  
կուսացած էր։ Եթէ վարչութիւնն էլ հրաժարուի՝ երկիւղ  
կայ, որ մի այլ հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս պատրիար-  
քական աթոռը բազմի Ուստի և աւելի լաւ է, որ սրբազն  
պատրիարքը իւր տեղում մնայ և հրաժարականի առիթ-  
ները, որ այս անդամ ներքին են, մի կերպ հարթուեն։

Բիւզանդիոնում կարդում ենք, որ Ազգային ժողովի  
վերջին նիստի միջնադէպի և մարտի 21-ին կիւրակէ օրը  
Խւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցում եղած միտինգի  
պաճառով իրանց հրաժարականն են ներկայացրել պատ-  
րիարքին դոքտոր Աճեմեանը Ազգային ժողովի ատենապե-  
տութիւնից և անդամակցութիւնից և Ազարեան էֆէն-  
դին՝ քաղաքային ժողովի ատենապետութիւնից, Խւսկիւ-  
տարի Ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհուրդը դի-  
մել է Սրբազն պատրիարքին և նկարագրելով միտինգի՝  
ապօրինաբար եղանակով եկեղեցում գումարելու եղանա-  
կը և յուղումնալից շարունակութիւնը, որ խաղաղուել է  
միայն կառավարութեան միջամտութեամբ, խնդրել է վերջ  
տալ այս անպատեհութիւններին, յայտարարելով նման  
դէպքերում իւր անպատասխանաւութիւնը։

Մարտի 24-ին քաղաքական ժողովը որոշել է՝

Ա. Մարտի 26-ին ազգային ժողովի նիստը դունիփակ  
կազմել.

Բ. Ազանայի հրկիզեալների ապահովութեան դատը  
շահուած լինելով փաստաբանների յանձնաժողովի ջանքով,  
չնորհակալութիւն յայտնել այդ յանձնաժողովին։

Գ. Մերժել իւր ատենապետ Ազարեան էֆէնդիի հրա-  
ժարականը և Թօփալեան ու Տաղաւարեան էֆէնդիների  
միջոցով խնդրել, որ շարունակի իւր պաշտօնը։

Դ. Առաջիկայ նիստին լսել կենդրօնական վարժարա-  
նի նախորդ տեսուչ Հինուրեանի լուսաբանութիւնը,

Ե. Դիմումն անել կառավարութեան խնդրելով, որ  
երուսաղէմի վանքի սեպհական և եղդի—Գուլէի դուրսը

եղած ազգային հողերը մահլիւլ (անտէր) չընկատուեն և այնուեղ բանտեր չըշինուեն:

Լրագրերից տեղեկանում ենք, որ Երիտասարդ վարդապետների եպիսկոպոսացման և առաջնորդ կարգուելու խնդիրը բաւական դէմ խորհրդածութեան նիւթ է դարձել կ. Պօլսում և գաւառներում:

Երուսաղէմայ զործեր,—Երուսաղէմի Տեղապահը հեռագրել է պատրիարքարան, որ մինչև մարտի 22-ը ուխտաւորների թիւը հասած է եղել 1220-ի. յայս կայ, որ մինչև Զատիկ 1500-ի հասնի, մինչ ուրիշ տարիներ 900-ից առելի չէ եղել. Տ. Կրիդորիս արքեպիսկոպոսն էլ հասել է Երուսաղէմ, Երուսաղէմի կուսակալ է նշանակուել Ազմի Պէյը, որին այցելել է Երուսաղէմի փոխանորդ Տ. Ամբատ վարդապետը շնորհաւորելու տեղապահի և միաբանութեան կողմից. Կուսակալը ցանկութիւն է յայտնել, Պօլսից մեկնելուց առաջ նորից տեսնել փոխանորդին.

Իեսարիայի առաջնորդ Տրդատ եպիսկոպոսը, որ կ. Պօլիս էր կոչուած, վարչութեան առաջարկին համակերպելով, պէտք է գնայ Երուսաղէմ գործակցելու տեղապահին վանքի բարեկարգութեան և տնտեսութեան կանոնաւորման համար. Տրդատ սրբազնը մարտի վերջերին Զմիւռնիա գնալով իւր զառամեալ մօրը տեսնելուց յետոյ անմիջապէս պէտք է մեկնի Երուսաղէմ:

### ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ

«Արմենիայի մէջ կարդում ենք, որ Կալկաթայի Հայոց ճեմարանի աշակերտների նախակին միութիւնը յունավարի Յանի տուել է իւր տարեկան ճաշկերոյթը, որին նախագահել է Ժ. Գ. Գալստեան, ներկայ են եղել 70-ի չափ անձեր».

Ճառախօսներից մէկը ասել է.

Մեր ծրագրեն է կրթել մեր հայ Երիտասարդները ազգութեան ընազդով, անոնց սորվեցունելով իրենց հայրերեւուն, կրօնքը, պատմութիւնն ու աւանդութիւնները,